

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2016 թվականի սեպտեմբերի 28-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 25 անդամ (ցուցակը կցվում է)

Օրակարգ.

1. 2016-2017 ուստարվա ֆակուլտետի Խորհրդի աշխատանքային պլանի նախագծի քննարկումն ու հաստատումը: /զեկ.գիտ.քարտուղար Ե.Ս.Մանուկյան/
2. 2016/2017 ուստարում ընդունված ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատումը /զեկ. ամբ. վարիչներ/
3. 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման լուծարքի արդյունքները /զեկ. փոխղեկաններ/
4. 2016/2017 ուստարվա ընդունելության արդյունքները /զեկ. փոխղեկան Ա.Գրիգորյան/
5. 2017/2018 ուստարվա մագիստրոսական ծրագրերի քննարկում: /զեկ. մեթ.խորհրդի նախ. Թ.Վարդանյան/
6. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտքարտուղար Ե.Ս.Մանուկյանի հաղորդումը 2016-2017 ուստարվա ֆակուլտետի Խորհրդի աշխատանքային պլանի վերաբերյալ: Ներկայացված աշխատանքային պլանի նախագծում ընդգրկված են ֆակուլտետում ընթացող և սպասվելիք բոլոր նախագծերի քննարկումները, ներառված են սահմանված թվով գիտական հաղորդումներ, ինչպես նաև ամբիոնի վարիչների հաշվետվություններն ըստ սահմանված ժամանակացույցի (2016-2017 ուստարվա ֆակուլտետի գիտ. խորհրդի աշխատանքային պլանը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Ա.Գրիգորյան – Իր խոսքում Մ.Ա.Գրիգորյանը շեշտեց կուրատորների աշխատանքի կարևորությունը՝ կոչ անելով ամբիոնի վարիչներին հետևողական լինել ամբիոնի կուրատորների կողմից ուսանողների հետ տարվող աշխատանքներին: Ամբիոնի վարիչների վրա դրվեց նաև դասախոսի ժամանակին լսարան մտնելու պատղաիր պայմանի ապահովումը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հասատտել ներկայացված 2016-2017 ուստարվա ֆակուլտետի գիտ. խորհրդի աշխատանքային պլանը:

ԼՄԵՑԻՆ – Երկրաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, գիտ.խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը ներկայացրեց երկրաֆիզիկայի ամբիոնի դոցենտ երկրաբանական գիտությունների թեկնածու Գագիկ Վարազդատի Մարկոսյանի՝ ԻԴ.01.08. <Երկրաֆիզիկա> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվություն ստանալու հարցը: Ելույթում Մ.Ա.Գրիգորյանը նշեց, որ Գ.Վ.Մարկոսյանն իր գիտական գործունեության ընթացքում ունի անհրաժեշտ քանակի տպագրված հոդվածներ և բավարարում է ԲՈՀ-ի կողմից ներկայացված պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին՝ Գագիկ Վարազդատի Մարկոսյանի ԻԴ.01.08. <Երկրաֆիզիկա> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու իրավունք տրամադրելու համար:

ԼՄԵՑԻՆ - Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ Գ.Վ.Մարկոսյանի հաղորդումը Երևանի պետական համալսարանի երկրաֆիզիկայի ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Սամվել Մանուկի Դեմինճյանի «Երկաթի հանքավայրերի հետախուզման և կանխատեսումային ռեսուրսների գնահատման երկրաբանա-երկրաֆիզիկական արդյունավետ մեթոդիկայի մշակում (ՀՀ հանքավայրերի օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսության և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Գ.Վ.Մարկոսյանը - Իր խոսքում Գ.Մարկոսյանը նշեց թեմայի արդիականությունը՝ արդյունավետ մեթոդիկայով ռեսուսների գնահատման ոլորտում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի Երկրաֆիզիկայի ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Սամվել Մանուկի Դեմինճյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Երկաթի հանքավայրերի հետախուզման և կանխատեսումային ռեսուրսների գնահատման երկրաբանա-երկրաֆիզիկական արդյունավետ մեթոդիկայի մշակում (ՀՀ հանքավայրերի օրինակով)» (ԻԴ. 01.08, Երկրաֆիզիկա) վերնագրով և գիտական ղեկավար հաստատել ամբիոնի դոցենտ երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գագիկ Վարազդատի Մարկոսյանին:

ԼՄԵՑԻՆ - Երևանի պետական համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Վահան Ակսելի Պոտոսյանի «ՀՀ սահմանամերձ և լեռնային տարածքներում տարաբնակեցման տեղական համակարգերի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսության և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա.Հ.Պոտոսյանը - խոսքում նշեց թեմայի իրականացման անհրաժեշտությունը՝ ելնելով տեղական համակարգերի թերի ուսումնասիրվածությունից՝ խնդրի տեղայնացված լինելու պատճառով:

Հ.Ա.Բաբայան – առաջարկեց վերանայել և անհրաժեշտության դեպքում վերնագրում “տարաբնակեցում” բառը փոխարինել “արտագաղթ” բառով:

Վ.Պ.Վարդանյանը – իր ելույթում նա կարևորեց սահմանամերձ և լեռնային տարածքներում կատարվող գիտական ուսումնասիրություն և փորձեց ճշտել արդյոք եղել է նմանօրինակ աշխատանք:

Մ.Գ.Մանասյանը – Տարաբնակեցման թեման համարվում է լավ ուսումնասիրված ոլորտ, կան բազմաթիվ գիտական հոդվածներ և գրականություն, ցավոք, նույնը չեն կարող ասել նույն խնդրի սահմանամերձ և լեռնային շրջանների վերաբերյալ: Մ.Մանասյանը շեշտեց թեմայի հրատապ լինելը: Խոսքի վերջում հավելեց, որ թեման համակարգային լուծում պահանջող թեմաներից է:

Ա.Ռ.Ավագյանը – Թեման ընտրելու խթանիչ հանգամանք է հանդիսացել “տարաբնակեցման” ոլորտում սահմանամերձ և լեռնային շրջանների թերի ուսումնասիրված լինելու փաստը: Կատարվող աշխատանքը կլուծի նաև ՀՀ սահմանամերձ տարածքների պաշտպանունակության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Վահան Ակսելի Պոտոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ սահմանամերձ և լեռնային տարածքներում տարաբնակեցման տեղական համակարգերի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները» (ԻԴ. 03.02, Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն) վերնագրով և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ռուստամի Ավագյանին

ԼՄԵՑԻՆ - Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Արման Լևոնի Գյուրջյանի «Արփա գետի վերին հոսանքի ավազանի երկրաբանությունը և հանքատարության առանձնահատկությունները» թեմայով թեկնածուական ատենախոսության և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ռ.Ս.Մովսեսյանը – էլույթում թվարկեց թեմայի իրականացման նպատակն ու հետաքրքրությունը՝ էլնելով տեղանքի բարդ ռելիեֆից ուսումնասիրությունների մեջ առկա են բացթողումներ և թերացումներ, ինչը հնարավորություն չի տվել երկրաբանական ավարտուն ուսումնասիրությունների:

Թ.Գ.Վարդանյան – խոսքում նշեց որ նշված տեղամասի որոշ հատված ուսումնասիրվել է Արփա-Սևան թունելի կառուցման ժամանակ: Որքանով է նպատակահարմար կրկնել ուսումնասիրությունը:

Ժ.Ա.Աչոյան – Խոսքում նա շեշտեց տեղանքի ուսումնասիրման կարևորության մասին: Փորձեց պարզել նախատեսել են արդյոք կատարել հորատման կամ երկրաֆիզիկական աշխատանքներ:

Շ.Վ.Խաչատրյան – ելույթում համաձայնեց տեղանքի բարդ լինելու հանգամանքի հետ, և առկա փաստացի նյութերի սակավաթիվ լինելու մասին: Առաջարկեց վերնագրում կատարել փոփոխություն «հանքատարություն» բառը փոխարինել «հանքաբերություն» բառով

ՈՐՈՇԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Արման Լևոնի Գյուրջյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արփա գետի վերին հոսանքի ավազանի երկրաբանությունը և հանքաբերության առանձնահատկությունները» (ԻԴ. 01.01, Ընդհանուր երկրաբանություն) վերնագրով և գիտական ղեկավար հաստատել ամբիոնի դոցենտ երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, դոց. Ռուբեն Սուրենի Մովսեսյանին:

ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի և Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը 2015-2016 ուս.տարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման լուծարքների արդյունքների վերաբերյալ:

հեռակա ուսուցում երկրաբանություն մասնագիտություն

1-ին կուրս՝ 4 ուսանող

2-րդ կուրս՝ 21 ուսանող, որից 2 հոգի հեռացված են անբավարար առաջադիմության համար

3-րդ կուրս 10 ուսանող

4-րդ կուրս 14 ուսանող

հեռակա ուսուցում աշխարհագրություն մասնագիտություն

2-րդ կուրս՝ 17 ուսանող, որից 1 հոգի հեռացված են անբավարար առաջադիմության համար

4-րդ կուրս 14 ուսանող, որից 1 հոգի հեռացված են անբավարար առաջադիմության համար

հեռակա ուսուցում սերվիս մասնագիտություն

1-ին կուրս՝ 6 ուսանող

2-րդ կուրս՝ 27 ուսանող

3-րդ կուրս 34 ուսանող

4-րդ կուրս 14 ուսանող

հեռակա ուսուցում քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտություն

1-ին կուրս՝ 5 ուսանող

3-րդ կուրս՝ 2 ուսանող

4-րդ կուրս՝ 11 ուսանող,

Արդյունքում՝ 180 «անբավարար» գնահատականից հետո 2-րդ լուծարքի ավարտին այդ գնահատականների քանակը նվազել է 25 «անբավարար»-ի:

առկա ուսուցում երկրաբանություն մասնագիտություն

1-ին կուրս՝ 17 ուսանող

2-րդ կուրս՝ 14 ուսանող

3-րդ կուրս՝ 6 ուսանող

առկա ուսուցում աշխարհագրություն մասնագիտություն

1-ին կուրս՝ 20 ուսանող

2-րդ կուրս՝ 25 ուսանող

3-րդ կուրս՝ 13 ուսանող

առկա ուսուցում սերվիս մասնագիտություն

1-ին կուրս՝ 23 ուսանող

2-րդ կուրս՝ 32 ուսանող

3-րդ կուրս՝ 9 ուսանող

առկա ուսուցում քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտություն

1-ին կուրս՝ 20 ուսանող

2-րդ կուրս՝ 11 ուսանող

3-րդ կուրս՝ 2 ուսանող,

Արդյունքում՝ 192 «անբավարար» գնահատականից հետո 2-րդ լուծարքի ավարտին այդ գնահատականների քանակը նվազել է 40 «անբավարար»-ի:

Մագիստրատուրայի առկա ուսուցման բաժնում խնդիրն է այլ է, 2-րդ լուծարքի արդյունքում առարկայական պարտք ունեցող ուսանողներ չկան, սակայն 9 ուսանող ուս.վարձը չվճարելու պատճառով ներկայացվել են հեռացման

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Ա.Գրիգորյանը - ելույթում նա նշեց, որ խնդիրը տեսնում է կոմպլեկտավորման մեջ: Ամբիոնի վարիչները աշխատանք պետք է տանեն ուսանողների հետ՝ որակյալ մասնագետներ պատրաստման հարցում: Մ.Ա.Գրիգորյանը խոսեց նաև ուսանողին ուս.վարձը

չվճարելու համար հեռացման հարցի մասին: Առաջարկեց թույլ տալ քննությունների բացառությամբ 1 ստուգարքի՝ հետագայում վերականգնվելու դեպքում արհեստական խոչընդոտներ չստեղծելու համար:

Մ.Գ.Մանասյանը – առաջարկեց խնդրին նայել զլոբալ մասշտաբներով և խոսեց ուսանողի հոգեբանության մասին: Խոսքում շեշտեց, որ ուսանողը դժգոհում է պահանջկոտ դասախոսներից:

Ս.Ռ.Սուվարյան – խոսեց դասախոսների գնահատման պրոցեսի մասին՝ դասախոսները գնահատում են ուսանողին երևույթը դիտարկելով որպես «պատժիչ գործընթաց»: Խոսքում նշեց սոց.հարցումների ոչ օբյեկտիվության մասին, քանի որ չկա գնահատման մեթոդաբանության տարբերակված ձև :

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն

ԼՄԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը 2016/2017 ուստարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ:

առկա ուսուցում երկրաբանություն մասնագիտություն

50 նախատեսված ուսանողի փոխարեն 24 ուսանող

առկա ուսուցում աշխարհագրություն մասնագիտություն

65 նախատեսված ուսանողի փոխարեն 67 ուսանող

առկա ուսուցում սերվիս մասնագիտություն

125 նախատեսված ուսանողի փոխարեն 130 ուսանող

առկա ուսուցում քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտություն

40 նախատեսված ուսանողի փոխարեն 46 ուսանող

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Ա.Գրիգորյանը – ելույթում նա նշեց որ աշխատանք պետք է տարվի մասնագիտությունները էլ ավելի պատշաճ մակարդակով ներկայացնելու շրջանավարտին, ինչը կավելացնի ֆակուլտետում գործող մասնագիտությունների ուսանողների թիվը, հատկապես աշխատանք կա տանելու “երկրաբանություն” մասնագիտության ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՄԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մեթոդ խորհրդի նախագահ Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը 2017/2018 ուստարվա մագիստրոսական ծրագրերի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հ.Ի.Մովսեսյանը - ելույթում նա նշեց, որ ներկայացված ծրագրերի շիֆրերում կա անհամապատասխանություն: Հստակ չէ չափորոշիչների և կողմնորոշիչների դրված պահանջը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ընդունելով արված առաջարկությունները լրամշակել և ներկայացնել որակի ապահովման կենտրոն:

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

ԼՄԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Հ.Պոտոսյանի հաղորդումը ամբիոնի նախկին (1995-1999թթ) հայցորդ Արմեն Աշոտի Հովսեփյանին որպես հայցորդ վերաձևակերպելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի պրոֆ. Մ.Գ.Մանասյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել Արմեն Աշոտի Հովսեփյանի, որպես սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ ձևակերպման հարցը

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան